Մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի Ս. Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոցի ուսուցչի թափուր տեղերի համար

19.08.2024թ.

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «**Ս. Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց**» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզու, ինֆորմատիկա, ֆիզկուլտուրա , տեխնոլոգիա, երգ, կերպարվեստ, աշխարհագրություն և մաթեմատիկա առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝գրավոր և բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի :

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը , որին հավակնում է /Ձև 1/:

2.Փաստաթուղթ / դիպլոմ /՝(միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ), ,, Հանրակրթության մասին ,, ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան որակավորման վերաբերյալ:

3.Անձնագրի պատճենը:
4.Ինքնակենսագրություն / Ձև 4 / :
5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի,հավաստագրերի պատճենները / դրանցառկայությանդեպքում /:
6.Մեկ լուսանկար 3 X 4 չափի:
7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են **2024թ. օգոստոսի 19-ից մինչև օգոստոսի 30-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 10-00-ից մինչև 16-00-ը , բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. սեպտեմբերի 5-ին, ժամը 13-00-ին Սյունիքի մարզի Ս. Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոցում**:

Հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Տաթև, 2-րդ փողոց, շենք 10:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098-707-831 կամ / 0284 / 97-4-71 հեռախոսահամարներով: